ԳԻՏԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱ
НАУЧНАЯ ИНФОРМАЦИЯ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ «ԿԵՂԾ ԹԱՂԻ» ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

1970 թ. Սիսիան ավանի արևելյան թաղամասում շինարարական աշխատանքների ժամանակ բացվել է ստորերկրա դամբարան, աստիճանաձև նեղացող ծածկով։ Հատակին կար մոտ 25—30 սմ հող, իսկ մնացած տարածությունը դատարկ էր։ Դամբարանը կառուցված էր ոչ այնքան խնամքով մշակված, 20—23 սմ հաստության, տարբեր երկարության կրաքարերից։ Դամբարանն ուղղանկյուն է, հատակագծում ներսի չափերն են 2,10×1,80 մ, բարձր.՝ 1,66 մ։ Պատերը շարված են նախապես պատրաստված սալահատակի վրա։ Մուտքը (75×69 սմ) գտնվում է արևմտյան կողմում, հարավային պատին կից և փակված էր ավելի փոքր չափերի քարերով։ Արևելյան և արևմտյան պատերի քարերը, չորրորդից մինչև յոթերորդ շարքը, 4,15 և 20 սմ առաջ դնելու հետևանքով դամբարանի վերին մասն աստիճանաձև նեղանում է մինչև 65 սմ և փակվում լավ մշակված 150×70×24 սմ չափերի երեք սալերով։ Նրանց վրա հում աղյուսներով (63×49×20 սմ) պատրաստված է մոտ 25 քմ մակերեսով հարթակ։ Վերջինս ծածկված էր 10—15 սմ հաստությամբ մոխրախառն կպչուն հողով, որի մեջ կային կոտրատված անոթների և կենդանիների վառված ոսկորների մնացորդներ։ Հարթակի վրա կար երկու խարիսխ, մեկը բազալտից, որը գտնվում էր դամբարանի հյուսիս-արևմտյան անկյունում, մյուսը՝ կրաքարից, հարավ-արևմտյան անկյունում (նկ. 1_{1-4})։

Թաղումը կատարվել էր դիակիզման եղանակով, մոխիրը լցված էր դամբարանում դրված կավե սարկոֆագի մեջ (երկ. 115 սմ, լայն.՝ 57 սմ, խոր.՝ 60 սմ)։ Բացի սարկոֆագից դամբարանում կային զահի մասեր, աշտանակներ, արծաթյա, խեցեղեն, ապակյա անոթներ, ոսկյա, արծաթյա զարդեր, զենքեր, դրամներ, որոնցից ամենաուշը Որոդես II-ի (57—37 թթ.) դրամն է։ Դամբարանը թվագրվում է մ. թ. ա. I դարի երկրորդ կեսով։

Հայաստանում «կեղծ թաղով» դամբարանները հանդես են գալիս մ. թ. ա. II հազարամյակում և հարատևում են մինչև մ. թ. ա. VI դարը։ Ըստ որում, հանդիպում են երկու, երեք և չորս կողմից աստիճանաձև նեղացող ծածկով դամբարաններ։ Այդպիսի դամբարաններ են հայտնաբերվել Օշականում[1], Սևանի ավազանում, Արագածի լանջերին, Լոռիում[2], Սիսիանի մոտ «Ղոշան դաշում» և այլուր։ Հսկաների տները («Օղուզի տները»), ինչպես ժողովուրդն է անվանում, կառուցված են հսկայական քարերով, առանց շաղախի. դրանք երեք կողմից, իսկ դոլմենները, որոնք երկարավուն են՝ երկու կողմից աստիճանաձև նեղանալով ծածկվում են հսկայական սալերով։ Քարերի տձևության պատճառով հնարավոր չէ ուղիղ անկյուններ ստանալ, ուստի ստացվում է կամարի ձև[3]։

Համեմատաբար ավելի կանոնավոր շարվածք ունեն և Սիսիանի դամբարանն են հիշեցնում Լոռիում պեղումներով բացված, միջին բրոնզի շրջանին վերաբերող № 1 և № 6 դամբարանները (նկ. 2_5)։ Դրանք ուղղանկյուն են, պատերը շարված են անմշակ, բայց կանոնավոր ձևեր ունեցող, մեծ սալերով։ Առաջինի չափերն են՝ հատակագծում 6,70×2,92 մ, բարձր. 2,60 մ, երկրորդինը՝ 5,50×3 մ, բարձր. 3 մ։ Երկու դամբարանների պատերն էլ, որոնք բաղկացած են յոթ շարքից, սկսած երկրորդից երկայնքով, երկու կողմից աստիճանաձև նեղանում են մին-

---

[1] С. А. Есаян. Находки урартских изделий в Ошаканском могильнике. — «Древний Восток и мировая культура», М., 1981, с. 94

[2] С. Г. Деведжян. Лори-Берд, I. Результаты раскопок 1969—1973 гг. Ереван, 1981, с. 19, 20, 24.

[3] *Թ. Թորամանյան. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության. I, Երևան, 1942, էջ 378, նկ. 279, հավելվածներ 381—403։*


1
2
3
4
5
6
PASPEJ II
A
B
2.92
3.86
1.95
0.596
0.546
0.575
1.57
1.62
2.28
3.58
40.596

Ob. 1

չև 1,55 մ և ծածկվում հսկա սալերով[4]։ Կամոյի շրջանի Կարմիր գյուղում բացվեց ուրարտական մ. թ. ա. VII դարի դամբարանը, որն ուղղանկյուն հատակագիծ ուներ, ծածկված էր պնկյուններով ձգված, աստիճանաձև նեղացող կոպիտ քարերով (նկ. 2_{1-4})։

Ենթադրվում է, որ «կեղծ թաղը» հանդիսացել է հայկական ճարտարապետության մեջ լայնորեն կիրառվող գլխատների ու հազարաշենների գմբեթավոր փայտե ծածկերի նախատիպը[5]։ Վերջիններս իրականացվում էին այնպես, ինչպես Կարմիր գյուղի վերոհիշյալ ուրարտական դամբարանը։ Հազարաշեն ծածկերի հնագույն օրինակներ հանդիպում են Կարմիր բլուրի մինչուրարտական բնակավայրում[6]։

Աստիճանաձև նեղացող ծածկով քարից ու աղյուսից պատրաստված դամբարաններ հայտնի են նաև հին աշխարհի տարբեր երկրներում, ինչպես, օրինակ, Եգիպտոսում (II դինաստիա), Մարիում, Ուրում (III հազ.), Քիշում՝ վաղ դինաստիական շրջանում[7], Սիրոս կղզու կիկլոպյան շարվածքով դամբարաններում[8] և այլուր։

Ծածկի այդ ձևը շատ տարածված է եղել հունական աշխարհում՝ Փոքր Ասիայում, Թրակիայում, Էտրուրիայում և հատկապես՝ Հյուսիսային Մերձսևծովյան շրջաններում[9], որտեղ այդ կառուցվածքը կատարելության է հասցված։ Բոսփորում դրանք հանդես են գալիս մ. թ. ա. V դարի վերջերին արդեն զարգացած ձևով, իսկ IV դարում, Պանտիկապեյում ու նրա շրջակայքում, գառնում են թաղման ամենատարածված ձևերից մեկը։ Այստեղ այն հարատևում է մինչև մ. թ. I դարը[10]։ Հանդիպում են երկու, երեք և չորս կողմից նեղացող, աստիճանաձև ծածկով դամբարաններ։ Վերջինիս փայլուն օրինակներից է Կերչի մոտ գտնվող «թագավորական կուրգանը»։

Բոսփորում դրանց հանդես գալու մասին երկու հիմնական կարծիք կա։ Մեկն այն է, որ դրանք հանդիսանում են այսպես կոչված էգեյան թոլոսների[11] (Ատրեոսի դամբարանը) հետագա զարգացումը, որոնք լայնորեն տարածված էին Հունաստանում մ. թ. ա. II հազարամյակի կեսերից մինչև IX—VIII դդ.։ Հունաստանում այդ շրջանում նաև աստիճանաձև ծածկով ուղղանկյունաձև դամբարաններ կառուցելու փորձեր են արվել, սակայն վերջիններս տարածում չստացան։ Միկենյան թոլոսների սկզբունքները շարունակվեցին Էտրուրիայում և Փոքր Ասիայում մ. թ. ա. VII—VI դդ., այսինքն մինչ Թրակիայում դրանց հանդես գալը։ Ենթադրվում է, ուրեմն, որ այդ ավանդույթը Բոսփոր է անցել Թրակիայից և Փոքր Ասիայից[12], որոնց հետ Բոսփորյան թագավորությունը սերտորեն կապված էր։ Երկրորդ կարծիքն այն է, որ այդ ավանդույթը ոչ մի կապ չունի Միկենյան թոլոսների հետ։ Այն առաջացել է տեղական ցեղերի մոտ գոյություն ունեցող, փայտից

---

[4] Ս. Դևեջյան. Լոռի բերդի № 2 դամբարանը. «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 2, էջ 267, նկ. 1։ С. Г. Деведжян. Указ. соч., с. 19, 20, 23, 24, рис. 3.

[5] С. В. Вартанян. Азарашен и его значение в армянской архитектуре. «Вестник общественных наук», 1967, № 6, с. 78;

[6] А. А. Мартиросян. Город Тейшебаини. Ереван, 1961, с. 25, 30, рис. 9 а, б.

[7] Г. Чайлд. Древнейший Восток в свете новых раскопок. М., 1956, с. 144, 223, 229, 233, 237; Всеобщая история архитектуры в 12 томах: Архитектура Древнего мира. 1, М., 1970, с. 199, рис. 2.

[8] Г. Чайлд. У истоков европейской цивилизации. М., 1952, с. 86, рис. 25.

[9] М. Ростовцев. Античная декоративная живопись на Юге России. СПБ, 1914, с. 109 и сл.; В. Ф. Гайдукевич. Боспорское царство. М.—Л., 1949, с. 245—274; Его же, Боспорские города. Уступчатые склепы, Эллинистическая усадьба, Илурат, Л., 1981, с. 6—52; В. Д. Блаватский, О происхождении боспорских склепов с уступчатыми перекрытиями,—СА, 1955, № XXIV, с. 29—53; А. Н. Карасев. Архитектура.—«Античные города Северного Причерноморья», М.—Л., 1955, с. 204—214; Г. Цанова, Л. Гетов. Тракийската гробница при Мъглеже.—«Археология», кн. 2, 1973, с. 15—29; В. И. Цехмистренко и В. Э. Кунин. Склеп с уступчатым покрытием в районе царского кургана близ Керчи.—МИА, № 69, 1959, с. 251—254; Д. С. Кирилин. Трехбратные курганы в районе Тобачикского озера.—«Античная история и культура Средиземноморья и Причерноморья», Л., 1968, с. 178—188.

[10] М. Ростовцев. Указ. соч., с. 139 и сл., 148.

[11] Հատակագծում շրջանաձև կառուցվածք ունեցող շինություններ։

[12] В. Ф. Гайдукевич. Боспорское царство, с. 262—265; его же. Боспорские города, с. 50—52; ВИА, с. 194, рис. 35.



Նկ. 2

պատրաստված դամբարաններից, որ հունա-մեոտական վերնախավը շարունակել է Մերձկուրանյան վրանաձև ծածկերով դամբարանների ավանդույթները՝ պարզապես փայտյա կառուցվածքները փոխարինելով քարով[13]։

Վերոհիշյալ կարծիքներից առաջինն ավելի համոզիչ է թվում։ Այդ ձևերը, ինչպես վերը տեսանք, արևելքում ավելի վաղ են հանդես գալիս, ուստի «կեղծ թաղով» ծածկի ակունքները պետք է փնտրել այնտեղ։ Շատ հավանական է, որ միկենյան թոլոսները իրենք կրած լինեն Առաջավոր Ասիայում և Եգիպտոսում գոյություն ունեցած այդ տիպի ծածկերի ազդեցությունը, թեև բացառված չէ իրարից անկախ դրանց հանդես գալը և զարգանալը։ Փոքր Ասիայում՝ խեթական[14] աշխարհում (Խաթուշաշ), Լիգիայում և այլուր[15], «կեղծ թաղով» քարե և աղյուսե[16] կառույցներ, դամբարաններ մ. թ. ա. II—I հազարամյակում հաճախ են հանդիպում։ Ուշ շրջանի այդօրինակ կառույցներից ուշադրության արժանի են Անկարայից 40 կմ դեպի արևմուտք գտնվող Կարալարում[17] 1933 թ. բացված, չորս կողմից աստիճանաձև նեղացող «կեղծ թաղով» դամբարանները («C»), որոնց ճիշտ ժամանակը որոշված չէ։ Վ. Ֆ. Գայդուկևիչը ենթադրում է, որ դրանք վերաբերում են հելլենիստական շրջանին[18]։

Ինչ վերաբերում է Հայկական լեռնաշխարհին, ապա մ. թ. ա. II—I հազարամյակի վերոհիշյալ դամբարանները թույլ են տալիս ենթադրելու, որ գործ ունենք ծածկի այդ ձևի ստեղծման ու զարգացման ավանդույթի հետ։ Սակայն Ուրարտուի անկումից հետո, մ. թ. ա. VI դարից մինչև մ. թ. ա. I դարի կեսերն ընկած ժամանակահատվածին վերաբերող «կեղծ թաղով» շինություններ Հայաստանում չեն հայտնաբերվել։ Կարելի է ենթադրել միայն, որ այդ ձևով են ծածկված եղել Քսենոփոնի «Անաբասիսում» նկարագրված (մ. թ. ա. V դարի վերջ) հայկական բնակարանները[19], Դարանաղյաց ու Անգեղտան գավառում թաղված հայ թագավորների[20] և Էրզրումի երկաթուղու շինարարության ժամանակ, 1917 թ. Հասան-Ղալայում բացված հելլենիստական դարաշրջանի դամբարանները[21]։ Հնագետներին չի հաջողվել վերջիններս կանգուն վիճակում տեսնել, որովհետև շրջակայքի բնակիչները դրանք քանդել և քարերը տարել էին։ Պահպանվել էր միայն սալահատակը և պատերի առաջին շարքի քարերի մի մասը։ Պատերը շարված են եղել բաց մոխրագույն, մոտ 0,5 մ բարձրությամբ սրբատաշ սալերից, առանց շաղախի, միայն անկյունային քարերը միացվել են ծիծեռնակապոչ կապերով։ Սալարկղը, որը գտնվում էր դամբարանի սալահատակի վրա, պատրաստված էր նույն քարերից (երկ. 2 մ, լայն. 1,5 մ)։ Բացելիս դամբարանը կանգուն է եղել և փայտյա ծածկի հետքեր չեն նկատվել (նկ. 1₅₋₆)։

Երկրորդ դամբարանաբլրի պեղումները պատերազմի պատճառով չավարտվեցին։ Սակայն պեղումների ղեկավար Ս. Վ. Տեր-Ավետիսյանի կարծիքով երկու դամբարանաբլուրները նման են, պատկանում են մ. թ. ա. III—II դդ. և դատելով նյութերից, կառուցվել են հելլենիստական մշակույթի ազդեցությամբ[22]։

Ուշ հելլենիստական Հայաստանում «կեղծ թաղն» օգտագործում են ոչ միայն քարե և փայտե, այլև աղյուսե կառուցվածքներում։ Աղյուսաշար այդպիսի դամբարաններ են հայտնա-

---

[13] В. Д. Блаватский. О происхождении Боспорских склепов с уступчатыми перекрытиями.—СА, XXIV, 1955, с. 37—38.

[14] ВИА, с. 242, рис. 25; Akurgal. Die kunst der Hethiter. München, 1961, Abb. 73; E. Klengel und H. Klengel. Die Hethiter und ihre Nachbarn. Eine kulturgeschichte kleinasien von Catal Hüyük bis zu Alexander dem Grossen. Leipzig, Koehler, Amelang, 1970, Abb. 30.

[15] С. А. Кауфман. Об уступчатых склепах Боспора.—«Сообщение Института истории и теории архитектуры АН СССР», № 6, 1947, с. 22—23; В. Ф. Гайдукевич, Боспорские города, с. 51; ВИА, с. 251, рис. 42.

[16] J. de Morgan. Recherches archeologiques, Fouilles a Suse. I, s. 114.

[17] Remzi Oguz Arık et J. Coupry. Les tumuli de Karalar et la sépulture du roi Déiotaros II.,— „Revue archéologique", 1935, T. VI, Juillet—décembre, p. 136—140, fig. $4_{8,9}$.

[18] В. Ф. Гайдукевич. Боспорское царство, с. 527, прим. 64.

[19] Xen. Anab., IV, 25.

[20] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1913, գ. III, իէ։ Փաւստոս Բիւզանդ. Պատմութիւն Հայոց. Վենետիկ, 1832, դպր. IV, իդ։

[21] С. В. Тер-Аветисян. Курган Хасан-Калы.—«Известия Кавказского историко-археологического института», том IV, Тифлис, 1926, с. 73—76, рис. 1.

[22] Նույն տեղում, էջ 84։

բերվել հին Հայաստանի Շակաշեն[23] մարզում (վերաբերում են մ. թ. ա. և մ. թ. I դարերին[24])։

Ենթադրվում է, որ Փարաքարի աշտարակաձև շինությունը նույնպես ունեցել է «կեղծ թաղ»[25]։ Սակայն նրա, ինչպես նաև աշտարակաձև մյուս շինությունների ինչ լինելը[26] և ծածկի հարցը վիճելի են։ Ծածկի այդպիսի կառուցվածք են ունեցել Դվինի պատրիարքարանի ապարանքի շինությունը (V—VI դդ.), միջնադարյան եկեղեցիների սեղանատները և դավիթները, բնակելի տներն ու իշևանատները[27]։ Այսպիսով, մենք տեսնում ենք «կեղծ թաղով» ծածկի ավանդույթների անընդմեջ՝ գոյությունը հայկական լեռնաշխարհում մ. թ. ա. II հազարամյակի կեսերից մինչև մեր օրերը։ Ենթադրվում է, որ Սիսիանի դամբարանը ունեցել է վերերկրյա կառույց[28], մինչդեռ, ինչպես վերը տեսանք, երկրորդ հարկ չի եղել։ Հայանաբերված խարիսխները կապ չունեն որևէ շինության հետ, նրանք ծառայել են իբրև զոհասեղաններ, որովհետև՝ ա) հայտնաբերված խարիսխներից մեկը կրաքարից է, մյուսը՝ բազալտից. բ) բազալտե խարիսխի վերին մասը կրակից սևացած է. գ) դրանք թեև գտնվել են իրենց սկզբնական տեղում (in situ), սակայն դամբարանի և միմյանց նկատմամբ սիմետրիկ չեն դասավորված. դ) դամբարանի վրայի աղյուսաշար հարթակը գրեթե անվնաս էր, սակայն վերերկրյա կառույցի այլ հետքեր չեն նկատվել. ե) «կեղծ թաղով» ծածկված հայտնի դամբարաններից և ոչ մեկը՝ Փոքր Ասիայում, Թրակիայում, Բոսփորում կամ Էտրուրիայում, երկրորդ հարկ, այսինքն վերերկրյա կառույց, չեն ունեցել։ Խարիսխներն իբրև զոհասեղաններ օգտագործելու սովորությունը լայնորեն տարածված է եղել Արտաշատի ուշ հելլենիստական և մ. թ. առաջին դարերի դիակիզումով կատարված թաղումներում։

Մ. թ. ա. III—I դդ., երբ ուժեղացան Հայաստանի կապերը հելլենիստական աշխարհի հետ, հայկական մշակույթը, այդ թվում նաև շինարարական արվեստը, կրեց հելլենիստական մշակույթի բարերար ազդեցությունը։ Թաղման ձևերի մեջ մուտք գործեցին հելլենիստական սովորույթներ, «կեղծ թաղով» դամբարաններն ավելի կատարելագործվեցին։

Ժ. Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

---

23 Կիրովաբադից հարավ, խանլար տանող ճանապարհին։

24 Я. И. Гуммель. Сырцовые гробницы Азербайджана и их датировка.—СА, 1940, № 6, с. 293—297; Его же. Археологические очерки. Баку, 1940, с. 149, 159, 160, фиг. 3 Д.

25 С. С. Мнацаканян. Композиция двухъярусных мартириумов в армянском раннесредневековом зодчестве.—«Историко-филологический журнал», 1976, № 4, с. 215.

26 Գ. Տիրացյան. Փարաքարի աշտարակաձև դամբարանը և նման հուշարձաններ Հայաստանում և Առաջավոր Ասիայում.—«Բանբեր Երևանի համալսարանի», 1970, № 1, էջ 238։

27 Վ. Հարությունյան. նշվ աշխ., էջ 72—80, նկ. 21—24։ Նույնի՝ Միջնադարյան ճարտարապետության ձևաստեղծումների ժողովրդական ակունքները. «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 4, էջ 60—67, աղ. I, 1, 4, 5, II, III, 3։

28 С. С. Мнацаканян. Указ. соч., с. 216.